




ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան



«03» 10 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 202 - 24

Նախաձեռնող՝

«Արխիպոն» ՍՊԸ

Մասիս համայնք, 3-րդ թաղ., 10-րդ շենք, բն. 3

Գործունեությունը՝

«Ենթալանի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում» շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվեկշիռություն

Տավուշի մարզ, Իջևան համայնք

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 202 - 24
« 03 » հոկտեմբեր 2024թ.

**Ենթավանի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում,
քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման
պլանի մշակում շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական
էկոլոգիական գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝

«Արխիտոն» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրույթային փաստաթուղթ

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության
ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ)
հաշվետվություն, գծագրական նյութեր

Ներածական մաս. Տավուշի մարզի Ենթավան բնակավայրի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանը մշակվել է քաղաքաշինության կոմիտեի պատվերով՝ տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Նախագիծը մշակվել է Կառավարության 2014 թ. մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N 442-Ն որոշման պահանջներին համապատասխան: Նախագծի հիմնական նպատակներին և առաջադրված խնդիրների լուծմանը հասնելու, սոցիալ-տնտեսական արագընթաց զարգացման, վերականգնման հնարավորության բարձրացման նպատակով կազմվել է Ենթավանի գլխավոր հատակագիծը՝ բաղկացած հողօգտագործման գլխավոր հատակագծից, ընտրված տարածքների կառուցապատման կանոնակարգման պլանից և կառուցապատման նորմերից:

Նախագծի մշակման հիմնական նպատակն է համայնքի տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Նկարագրական մաս. Տավուշի մարզը (այսուհետ՝ Մարզ) գտնվում է ՀՀ տարածքի հյուսիսարևելյան հատվածում: Հարավում սահմանակից է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ Լոռու մարզին, պետական սահմանով հյուսիսում՝ Վրաստանին, և արևելքում՝ Ադրբեջանին: Մարզն ունի մոտ 350 կմ միջպետական սահման: Տարածքը 2704



կմ² է, որը կազմում է ՀՀ տարածքի 9.1%-ը: Այն ընդգրկում է Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջանները: Մարզի տարածքի շուրջ 4.3%-ը զբաղեցնում են բնակավայրերի, ջրային, էներգետիկայի, կապի և տրանսպորտի տարածքները, շուրջ 54%-ը՝ անտառային (113 566.7 հա) ու հատուկ պահպանվող տարածքների հողեր են (33 031.6 հա)՝ ազգային պարկը և արգելավայրերը, որոնք կազմում են հանրապետության անտառային հողերի 38%-ը՝ ընդգրկելով հիմնականում մարզի միջին և հարավային հատվածները, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 110 675.7 հա, այդ թվում վարելահողեր՝ 25 495.6 հա:

Մարզկենտրոն Իջևանը հանդիսանում է Տավուշի մարզի վարչական, կրթական, մշակութային կենտրոնը, գտնվում է հանրապետության հյուսիս-արևելքում՝ Աղստ գետի հովտում, մայրաքաղաքից 134 կմ հեռավորության վրա: Համայնքը զբաղեցնում է 2767 հա տարածք: Հատակագծման սկզբունքով այն քաղաք-պարտեզ է, կենտրոնական մասը կանաչապատված է տնկովի փշատերև ծառերով: Քաղաքի արվարձանները շրջապատված են անտառածածկ լանջերով:

Ենոքավան բնակավայրը, գտնվում է Իջևանից 13 կմ, Երևանից 144 կմ և Թբիլիսիից 150 կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական սահմանում ընդգրկված տարածքների լեռնային լանդշաֆտը բնութագրվում է որոշակի յուրահատկություններով: Դա արտահայտվում է լանդշաֆտի բաղադրիչների (անտառ, բացատներ, գյուղատնտեսական հողատեսքեր) համամասնությամբ, դրանց տեղադրվածության, լանջերի արևահայացության, թեքությունների, ձորերով, ձորակներով ու հանդակներով: Նշված բնական տարածական նախադրյալները հիմք են հանդիսացել բնակավայրերի՝ որպես ինքնուրույն միավորների ձևավորման համար: Տարածաշրջանի բնակավայրերը գտնվում են գետերի և գետակների հովիտներում կամ լեռնալանջերի թեք ու գոգավոր հարթակներում: Ենոքավանի տարածքը գտնվում է Սառնաջուր գետի կիրճի ապառաժ անդունդի եզրին:

Ենոքավան բնակավայրի 75.51 հա տարածքի նիշերը ծովի մակարդակից բարձրության վրա տատանվում են՝ 1075 մ արևելքում, 1125 մ համայնքապետարանի մոտ և 1171 մ արևմտյան մասում: Համայնքի հարավային սահմանը գտնվում է Սառնաջուր գետահովտի բարձր զառիթափի եզրին: Այստեղ կան խմելու համար օգտագործվող բազմաթիվ աղբյուրներ: Բնակավայրի սահմաններում հորիզոնական նիշերի անկումը կազմում է 96 մ:

Կլիման բարեխառն է: Ձմեռը տևական և համեմատաբար ցուրտ է, թույլ քամիներով, բավական կայուն ու հաստ ձնածածկ շերտի գոյացումով: Ամառը տաք է և չոր:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 10.8°C, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դեկտեմբերին՝ -23°C, բացարձակ առավելագույնը օգոստոսին՝ +37°C է:

Տարվա ընթացքում տեղումների քանակը՝ 563 մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է հունիսին՝ 74 մմ, իսկ նվազագույնը դեկտեմբերին՝ 16 մմ:

Ենոքավան գյուղական համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 750-2425 մ բարձրության սահմաններում, մի մասը կառուցված է մոտ 1100 մ բարձրության վրա, զբոսաշրջային համալիրը (հանգստի և ժամանցի գոտին) գտնվում է 1300 մ բարձրության վրա և ավելի բարձր (1280 – 1465 մ):

Գյուղատնտեսության զարգացած ճյուղերն են համարվում հացահատիկային մշակաբույսերի՝ ցորենի և եգիպտացորենի մշակությունը: Համայնքում զբաղվում են նաև կարտոֆիլի մշակությամբ: Ավանդական արդյունավետ ճյուղերն են խոզոր, եղջերավոր անասնաբուծությունը, ոչխարաբուծությունը և մեղվապահությունը:

Բնակավայրում արդյունաբերական ոլորտի ձեռնարկություններ չեն գործում: Ենոքավայրեր չեն շահագործվում, շրջակա միջավայրն աղտոտման չի ենթարկվում:



Խմելու ջրի ջրավազանների և ջրամբարների պահպանության վիճակը բավարար է: Համայնքային և պետական անտառային ֆոնդում պահպանվում են բնօգտագործման կանոնները, սակայն լուրջ խնդիրներ կան կենցաղային աղբից և թափոններից շրջակա միջավայրի պաշտպանության գործում:

Ենթավանի բնակչության հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսության և տուրիզմի ոլորտներում են:

Տուրիզմով զբաղվող (հյուրանոցներում և արկածների պարկում աշխատող) անձինք Ենթավան աշխատանքի են գալիս մարզկենտրոն Իջևանից: Իջևանի տարածաշրջանը, համարվելով Հայաստանի հյուսիսային դարպասն, աչքի է ընկնում զբոսաշրջության զարգացման հեռանկարային մեծ պոտենցիալով՝ ներառելով բնական, պատմամշակութային ժառանգություն և գեղատեսիլ բնության տեսարժան վայրերը, հարուստ և յուրահատուկ մշակույթը:

Թեև Ենթավանն իրենից ներկայացնում է ինքնաբավ զբոսաշրջային ենթակառուցվածքով բնակավայր, այնուհանդերձ, հարակից՝ համայնքի կենտրոնում գործում է 12 հասարակական սննդի վայր, որոնք կարող են սպասարկել օրական մինչև 600 մարդ: Իջևանում է գտնվում 3000 հանդիսատեղով ֆուտբոլային մարզադաշտը, ինչը մարզական տուրիզմի զարգացման հիմնաքարերից է:

Տարածաշրջանում են գտնվում բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, գեղատեսիլ վայրեր, ինչպիսիք են Ծովիզը, Մակարավանքը, Կիրանց վանքը, Վարդան Մամիկոնյանի ծառը, Աշոտ Երկաթի չինարի ծառը, միջնադարյան կամարակապ կամուրջներ, Փոքր Անապատ հնավայրը և այլն:

Զբոսաշրջության զարգացման առումով առանձնանում է Ենթավան բնակավայրի տարածքում հիմնված և տարիներ շարունակ գործողությունների և ծառայությունների շարքը ընդլայնող «Ենթավանի զարգացման հիմնադրամի» ջանքերով գործող՝ «Ապագա ռեզորթ», «Լաստիվեր» և «Յելլ Պարկ» զբոսաշրջային, ակտիվ և պասիվ հանգստի ծառայություններ մատուցող կենտրոնները:

Բնակավայրի համալիր հետազոտման արդյունքում ձևավորվել են հետևյալ հնարավորությունները՝ 4 ֆունկցիոնալ հնարավորություններ, որոնք կարելի է ստեղծել կամ զարգացնել Ենթավանում.

- օդային էքստրեմալ սպորտային զբոսաշրջություն,
- էկոլոգիական և գյուղական զբոսաշրջություն,
- զույգերով հանգիստ և հարսանեկան հանդիսություններ,
- բացօթյա ժողովներ:

Գոտևորման փաստաթղթում ներառված են տարաբնակեցման համակարգի միավորի սոցիալական և տնտեսական զարգացման հիմնախնդիրները՝ ճանապարհատրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների կատարելագործումը, բնության, պատմամշակութային ժառանգության և շրջակա միջավայրի պահպանությունը, բնածին բարիքների և նախորդ սերունդների ստեղծած մարդատեխնածին նյութական արժեքների արդիականացումն ու խնայողաբար շահագործումը, առանձին միավորների միջև զարգացման հիմնախնդիրների վերաբաշխման միջոցով շաղկապված որակական բովանդակային և առաջադիմական արդյունքի ստացումը:

Հիմնվելով ներկա իրավիճակի և նախորդ ժամանակաշրջանի ուսումնասիրության ու վերլուծության վրա՝ նախատեսվում է հիմնական ուղղությունները նպատակաուղղել գոյություն ունեցող հզորությունների կատարելագործմանը և բարեփոխմանը, ինչի շնորհիվ



կարող են նոր հիմքեր ստեղծվել հեռանկարային զարգացման տեմպերի արագացման համար:

Զարգացման սկզբունքային ուղղությունների հիմքում ընդունվել է բնաշխարհի բարիքների՝ հողի, ջրի, անտառների, բնական և մարդածին լանդշաֆտային համալիրների խելամիտ և խնայողաբար օգտագործման պայմանները:

Նախագծով նախատեսվում է հետևողական և շարունակական աշխատանք տանել բնակավայրերի տարածքների մաքրության պահպանման ուղղությամբ, ստեղծել աղբի և թափոնների հավաքման, կուտակման և վնասագերծման արդյունավետ համակարգ և համապատասխան տեխնիկական հզորություններ:

Ներկա դրությամբ Ենոքավան բնակավայրի շինությունների մեծ մասը վերանորոգման կարիք ունի: Վերջին տարիներին զբոսաշրջային տնտեսության մի քանի օբյեկտներ են կառուցվել, մասնավորապես, միջին դասի հյուրանոց, ռեստորան և գինետուն:

Նախագծի շրջանակում՝ բնակավայրի կարգավիճակը դիտարկելով, թե՛ տեղի մշտական, և թե՛ այցելու՝ ժամանակավոր, բնակչության համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման տեսանկյունից, առաջարկվում է բարձրացնել Ենոքավանի ճանաչելիությունը՝ շեշտը դնելով հանրային սննդի և ըմպելիքների օբյեկտների և ընտանեկան ֆերմաների զարգացման վրա: Տվյալ հայեցակարգի իրականացումն ապահովելու համար դիտարկվում են հետևյալ ուղղությունները.

- Ընտանեկան ֆերմային տնտեսությունների ստեղծում, որոնք նախատեսված են գյուղական միջավայրում կենդանիների հետ անմիջական շփում ենթադրող հանգստի սիրահար ընտանիքների համար:

- Նոր՝ միջին դասի հյուրանոցների կառուցում: Նախատեսվում է կառուցել լրացուցիչ միջին դասի հյուրանոց մինչև 30 համարներով, առկա հյուրանոցին կից:

- Սննդի և ըմպելիքների օբյեկտներ (F&B զբոսաշրջություն) և մանրածախ առևտրի հետիոտն փողոց: Նախատեսվում է կառուցել հետիոտների համար նախատեսված ճեմուղի (մեքենաների մուտքը միայն բնակիչների համար), որտեղ կլինեն փոքր սրճարաններ, բարեր, տեղական և ավանդական ապրանքների/ձեռագործ արվեստի գործերի մանրածախ առևտրի միավորներ/խանութներ:

Բացօթյա շուկաներ՝ հանրային սննդի և ըմպելիքների պողոտան կավարտվի բացօթյա շուկայով, որտեղ տեղաբնակները կարող են վաճառել տեղական արտադրանք, ձեռագործ իրեր և պատրաստի սնունդ:

Նախատեսվում է կառուցել բացօթյա սպորտային օբյեկտ՝ տեղաբնակների և այցելուների համար: Դա կարող է լինել բազմաֆունկցիոնալ մարզադաշտ՝ ֆուտբոլի, բասկետբոլի և այլ մարզումների համար: Բացի այդ, այն կարող է գյուղի այցելուների համար ծառայել որպես սպորտային օբյեկտ:

Գյուղի մուտքային հանգույցի մոտ նշվել է կայանատեղիների գոտի՝ այցելուների համար, նախատեսված մինչև 70 մեքենաների համար՝ գյուղի ներքին տարածքը մեքենաների հոսքից զերծ պահելու նպատակով:

Բնական պայմանների և մարդու գործունեության համադրությամբ ձևավորվել է տարածական հատակագծային գոյացություն, որն իր տարածական կառուցվածքն ունի: Այն բնորոշվում է բաղադրիչների բովանդակային կազմով, տարածքներով, հեռավորություններով, հանգուցային կամ կետային, և գծային տարրերով ու դրանց հատկություններով:

Հանգուցային կամ կետային տարրերից կարևորվում են բնակավայրերը, դրանց մասերը կազմող բնակելի, հասարակական, ընդհանուր օգտագործման տարածքները:



կառուցապատումը, ճանապարհափողոցային ցանցը, կանաչապատումը և այլն: Ի տարբերություն վերը նշվածի՝ արդյունաբերական կառուցապատումը դիտարկվում է որպես հանգուցային տարր, բնակչության կենսագործունեությունն ապահովող ինժեներական ենթակառուցվածքը՝ գծային տարր:

Գծային տարրերի կազմում առանձնանում են միջբնակավայրային ճանապարհները, որոնց միջոցով իրագործվում է միջբնակավայրային արտաքին հաղորդակցությունը, բնակավայրերի, արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրության և այլ ձեռնարկությունների ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կապի միջոցների մայրուղային գծերը: Նշված գծային տարրերն ունեն իրենց հանգուցային տարրերը՝ ջրընդունիչ և ջրաբաշխիչ կառույցներ, էլեկտրակայաններ և էլեկտրաենթակայաններ, գազաբաշխիչ կայաններ և այլն:

Վերը նշված տարրերի միջոցով է բնութագրվում համայնքի տարածքի հատակագծային կառուցվածքը: Հատակագծային կառուցվածքի ձևավորման հիմնական գործոնը նաև տարածքի բնական պայմաններն են՝ ձևաբանական (ռելիեֆ) կամ հողի մակերևույթի ձևը, ջրաբանական ցանցը, ինչպես նաև ինժեներաերկրաբանական պայմանները:

Տարածքի հատակագծային կառուցվածքի ձևավորման հիմնական տարրերից առանձնանում է Մ-4 միջպետական նշանակության ավտոմայրուղին, որն անցնում է հյուսիս-հարավ ուղղությամբ՝ Աղստև գետին զուգահեռ: Այս գծային գոյացությունը հատակագծային կառուցվածքի գլխավոր գծային տարածական առանցքն է, որի շնորհիվ իրականացվում են սոցիալական, տնտեսական, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կապերը:

Ենթադրված բնակավայրն ընդգրկում է 4017.09 հա տարածք, այդ թվում՝

- բնակավայրերի հողեր – 75.51 հա, հեռանկարում՝ 101.91 հա,
- արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր – 5.01 հա, հեռանկարում՝ 2.08 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմուն. հողեր – 0.39 հա,
- գյուղատնտեսական հողեր – 1984.31 հա, հեռանկարում՝ 1928.36 հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր – 11.29 հա, հեռանկարում՝ 43.77 հա,
- հատուկ նշանակության հողեր – 13.73 հա,
- անտառային հողեր – 1923.15 հա,
- ջրային հողեր – 3.7 հա:

Նախագծում արտացոլված են բնական պաշարների (ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության, տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների և կաթսայատների ճիշտ տեղադրման արդյունքներն՝ անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ՝ կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Բնակավայրի ինժեներական ենթակառուցվածքի նախագծային բեռնվածությունները կազմելու համար, որպես ելակետային հիմնավորում, օգտագործվել են ոլորտները համակարգող կազմակերպությունների տեղեկատվական նյութերը:

Համաձայն «Վեոլիա Ջուր» ընկերության տվյալների՝ Իջևանի ջրամատակարարման համակարգում ներկայումս ներգրավված են 40 աղբյուրներ, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 100 լ/վրկ: Վարակազերծումը կատարվում է տարբեր կապտաժներում և ՕԿՋ-ներում: Ջրագծերը կառուցվել են 1960-1980 թվականներին: Դրանցից 24.6 կմ փոխարինվել է նորով 2013-2015 թթ., մնացած հատվածները հիմնանորոգման կարիք ունեն: Իջևանը սնող



գծերի երկարությունը 64.4 կմ է, տրամագծերը 90-300 մմ, ՕԿՁ-ների ընդհանուր քանակը 16-ն է, ընդհանուր տարողությունը՝ 6600 մ³:

Ենթավան բնակավայրը ջուր վերցնում է տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ Ապագա Ռեզորթից: Ջուրը տեղափոխվում է գյուղի վերին մասում կառուցված օրվա կարգավորիչ ջրամբար: Համակարգն ամբողջովին վնասված է և վերանորոգման կարիք ունի:

Ջրամատակարարման համակարգի պատշաճ աշխատանքն ապահովելու նպատակով առաջարկվել է անցկացնել D=90-75 մմ տրամագծով խողովակաշար Ենթավան բնակավայրից 9կմ դեպի արևելք գտնվող Սառնաջուր գետի հովտում գտնվող աղբյուրներից: Խողովակաշարի ծրագծի երկայնքով առկա մի քանի աղբյուրներին նույնպես կարելի է միանալ, արդյունքում հոսքի արագությունը կբարձրանա մինչև 6- 8լ/վրկ:

Անհրաժեշտ է կառուցել յուրաքանչյուրը 300 մ³ տարողունակությամբ, իրարից 800 մ հեռավորության վրա գտնվող երկու ջրամբար (ՕԿՁ) և ջրամաքրման (քլորացման) կայան:

Համաձայն նախագծի՝ կոյուղու համակարգը Ենթավանում կառուցված է տեղ-տեղ: Այն ամբողջությամբ վերականգնման կարիք ունի:

Ենթավանի կոյուղու համակարգի պատշաճ աշխատանքն ապահովելու նպատակով Սառնաջուր գետի ափին նախատեսվում է կառուցել կեղտաջրերի մաքրման կայան (այն պետք է նախագծել գոյություն ունեցող առևտրային օբյեկտների, վարչական ենթակառուցվածքի և 1600 մարդու կարիքները բավարարելու համար անհրաժեշտ հզորությամբ)՝ կիրառելով ISBS կենսատեխնոլոգիա, քանի որ այն ապահովում է մոդուլյար համակցված բիոռեակտորի (MCBR) միջոցով արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերի մաքրում, որն աշխատում է առանց պարզարանի և բիոգանգվածի վերաշրջանառության՝ մինչև մաքրման փուլում:

Կեղտաջրերի հավաքման նորմերի համաձայն՝ բնակավայրի կոյուղու մագիստրալն անհրաժեշտ է կառուցել D=200-250 մմ տրամագծով ծալքավոր խողովակներով, իսկ ներքին ցանցը՝ D=150 մմ խողովակներով, հավաքիչ հորերի միջև առավելագույն տարածությունը պետք է լինի 40 մ:

Այն տեղամասերը, որոնք, իրենց բարձրության նիշով պայմանավորված, չեն կարող կապվել կոյուղու հիմնական համակարգին, կունենան մաքրման պարզ սեպտիկ համակարգ:

Ջրամատակարարումը նախատեսվում է բնակչության խմելու, տնտեսա-կենցաղային, արտադրական, ինչպես նաև հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության մեկ մարդու միջին օրական ջրապահանջի քանակն, ըստ ներկայումս ընդունված նորմերի, կազմում է՝ քաղաքների համար 200 լ/օր, գյուղերի համար 150 լ/օր:

Ենթավան համայնքի վարչական տարածքում ոռոգման նպատակով օգտագործելու ջրաղբյուրներ չկան:

Համայնքում ոռոգման պահանջը բավարարելու համար կձեռնարկվի նախկինում գործող ոռոգման համակարգի վերականգնում նորոգելով կամ կառուցելով նոր պոմպակայաններ: Էլեկտրաէներգիայի գերաճախսից խուսափելու համար համայնքների միջև կիրառվելու է ոռոգման սեզոնային օրական ժամանակացույց:

Ոռոգման ինքնահոս աղբյուր կարող է ծառայել Աղստև գետի Սառնաջուր վտակը, ջրառը կկատարվի գետի բարձր նիշերից: Տարածքի որոշ հատվածների ոռոգման համար մասամբ կարող են կառուցվել համապատասխան սահմանափակ հզորությամբ պոմպակայաններ, կիրառելով ոռոգման սեզոնային օրական ժամանակացույց՝ էլեկտրաէներգիայի գերաճախսից խուսափելու համար:

Ոռոգման համակարգ կառուցելու և համապատասխան սարքավորելու համար նախատեսվում է կառուցել ջրընդունիչ և բաշխման ցանց:



Ենթադանի միայն կենտրոնական փողոցն ունի հեղեղաջրերի հեռացման համակարգ: Մյուս տարածքները չունեն ջրահեռացման համակարգ, քանի որ գյուղը և մյուս տեղամասերը կառուցված են թեք ռելիեֆի վրա՝ իրարից անջատված փոքր կիրճերով, մինչդեռ ճանապարհներն ապահովված են հեղեղաջրերը հեռացնելու համար նախատեսված փոքր ջրատար առուներով:

Ճանապարհների վերականգնման աշխատանքների ընթացքում նախատեսվում է մեծացնել ջրատար առուների տրամագիծը և նախատեսել ջրանցքներ:

Գոյություն ունեցող էլեկտրամատակարարման համակարգը հզորացնելու նպատակով նախատեսվում է 35/10 կՎ ենթակայան, որը տեղադրվելու է Ենթադանի արևելքում և միացվելու է 35կՎ էլեկտրահաղորդման գծին: Բացի այդ, խորհուրդ է տրվում տեղադրել 500 կՎԱ արևային համակարգ «Ապագա Ռեզորթի» արևմուտքում: Ստորգետնյա մալուխով այն կմիացվի նախատեսվող ենթակայանի 10կՎ կողմին:

Հանգստավայրի տարածքում առկա շինություններն ապահովվելու են ցածր լարման բաշխիչ վահանակներով և պահուստային սարքերով:

Այդ նպատակով նախագծով նախատեսվում է՝

- համակարգի արդիականացում, համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին,
- էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար՝ անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների,
- էլեկտրախնայողություն՝ կորուստները ցանցերում հասցնելով նորմատիվային պահանջներին,
- փայտյա հենասյուների փոխարինում նորերով,
- կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքներից բարձրավիճակով էլեկտրահաղորդման գծերի դուրսբերում ազատ գոտի՝ ապահովելով դրանց անվտանգության գոտու սահմանները,
- նոր կառուցապատվող տարածքների համար անհրաժեշտ 10 կվ և 0.4 կվ լարման ցանցի, ինչպես նաև 10/0.4 կվ լարման ցանցային ենթակայանների նախատեսում:

Ենթադանի մեծ մասն ապահովված է գազամատակարարմամբ:

Համաձայն հաշվետվության՝ համայնքում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Տրանսպորտային հոսքերի աղմուկն առաջանում է մեքենաների աղմուկից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

Մեքենաների շարժման ինտենսիվությունը չի գերազանցում ժամում 150 մեքենա:

Համայնքում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 75.51 հա: Հաճախակի են աղբի կուտակումը բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Ենթադանում առաջացած կենցաղային կոշտ թափոնների տարեկան քանակը կազմում է 119 տ/տարի:

Համայնքի տարածքում նախատեսվում է մեկ միասնական միջհամայնքային՝ մինչև 10 տ/օր (շուրջ 3700 տ/տարի) հզորությամբ աղբավայրի ստեղծում, որի տարածքում կառուցվի աղբի տեսակավորման արտադրություն: Արդյունքում զգալի չափով նվազելու է աղբի պահեստավորման ծավալը, պահեստավորման պոլիգոնի պահանջվող չափերը, շրջակա միջավայրի վրա անբարենպաստ ազդեցությունը:

Աղբավայրի տեղադրման համար Լուսաձոր համայնքում ընտրվել է տարածք՝ Ենթադանից շուրջ 1.5 կմ հեռավորությամբ գտնվող, տրանսպորտի համար բարենպաստ դիրքով, փոքր թեքություն ունեցող շուրջ 2.0 հա հողամասում:



Ենթադրվում առկա է 1 գերեզմանոց՝ ընդհանուր 1.77 հա տարածքով: Գերեզմանոցը գործող է, որի զգալի մասում սանիտարական գոտին պահպանված չէ: Մշակվել են միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցի տարածքը:

Ծրագրով՝ գերեզմանոցի այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Համաձայն նախագծի՝ ներկա դրությամբ գյուղական բնակավայրում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդամենը կազմում են՝ 0.72 հա՝ գլխավորապես հուշարձանի հարակից տարածքում: Շինարարական նորմերի և «Կառավարության 2018թ. Փետրվարի 08-ի N108» որոշման համաձայն գյուղական բնակավայրերում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար՝ 10 մ²/մարդ:

Տնամերձ հողամասերում կանաչապատման մասը տատանվում է 0.5-ից 0.56 հա:

Ենթադրվան բնակավայրի ընդգծված ռեկրեացիոն ուղղվածությունը միտված է բնակավայրի տարածքում զգալի ու հատուկ նախագծով իրականացված հանրային կանաչ գոտու ձևավորման ծառայելուն, ինչպես տեղի բնակչության առօրյա, այնպես էլ այցելուների համար:

Համալիր վերլուծության արդյունքում՝ տեղադիրքն ընտրվել է՝

- ըստ բնակավայրի տարբեր հատվածներից հավասարազոր հասանելիության,
- ըստ բարձունքային դիրքով դոմինանտային տեղադրությամբ՝ հիգիենիկ և գեղագիտական բարձր հատկանիշներով,
- տարածքից բացվող արժեքավոր տեսադաշտերով:

Ընտրվել է գերեզմանոցից դեպի հյուսիս տեղակայված սարահարթի հատվածը՝ միասնական նախագծի հիման վրա ձևավորելով այն որպես.

- ծառապատ ճեմուղիներով կազմակերպված զբոսայգու գործառնական հատված,
- ժամանցային թեմատիկ ենթագոտիներ,
- սպորտային հատված (ժայռամագլցում, ճոպաններով քայլ և այլն),
- դիտահարթակ,
- տարաբնույթ միջոցառումների՝ փառատոների, տոնավաճառների հատված,
- բացօթյա բեմահարթակ՝ ամֆիթատրոնով,
- լողավազան,
- գիփյալն դեպի բնակավայրի ցածրադիր հատված:

Հեռանկարում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսն ըստ նորմաների պետք է կազմի 12 մ²/մարդ:

Համաձայն նախագծի՝ կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն տարածաշրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- ներբնակավայրային ճանապարհների և բակերի հիմնանորոգում
- Աղստև գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքերի

կենսաբնական մաքրման կայանի նախագծում և կառուցում;



օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

- Բնակավայրում քաղաքաշինական լուծումներն իրականացնելիս բացառել անտառային և հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:

- Հիմնադրությամբ փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Արխիտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Ենոքավան բնակավայրի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակման շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Շիրինազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան